Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են միջոցառումներ ըստ նախորոք մշակված աշխատանքային պլանի: Իրականացվել են կանխարգելիչ և տեղեկատվական հանդիպումներ ու միջոցառումներ ծրագրի շահառու ծնողների և երեխաների շրջանումնվիրված <<Ոչ Բռնությանը>> միջազգային օրվան:

Հաշվետուu ժամանակահատվածում ծրագրի շահառու երեխաների համար կազմակերպվել են և ճանաչողական, ուսումնական հմտությունների զարգացմանը ուղղված այցեր և ճամբարներ:

**Աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները.**

**<<Ոչ բռնությանը>> միջազգային օրվան նվիրված իրազեկող և կանխարգելիչ հանդիպումներ, միջոցումներ:**

Ս/թ սեպտեմբեր ամսին Հայկական Կարիտասի Գավառի <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնի կողմից իրականացվել է <<Ոչ բռնությանը>> միջազգային օրվան նվիրված իրազեկող և կանխարգելիչ հանդիպումներ, միջոցռումներ:
Իրազեկող և կանխարգելիչ հանդիպումները, միջոցառումները իրականացվել են ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ:
<<Ոչ բռնությանը>> միջազգային օրվան նվիրված իրազեկող և կանխարգելիչ հանդիպումներ, միջոցռումներին ընդհանուր թվով մասնակցել է **82 շահառու երեխա** և **46 շահառու ծնող:**
Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ Իրազեկող և կանխարգելիչ միջոցառումները՝

- Իրազեկող և կանխարգելիչ հանդիպումները, դասընթացներ ծրագրի շահառու երեխաների համար: Բռնության տեսակները, դրանց տարբերակումը և բողոքարկման մեխանիզմների մասին իրազեկման վերաբերյալ տեղեկատվալան հանդիպումներին մասնակցել է **79** շահառու երեխա, որից՝ տղա **36**, աղջիկ **43**: Հանդիմումների ընթացքում կենտրոնի սոցիալակ աշխատողները և հոգեբանը շահառուներին ներկայացրել են բռնության տեսակները, քննարկվել են բռնության փոխարեն կիրառվող այլընտրանքային տարբերակները, տեղի է ունեցել իրավիճակների ներկայացում և քննարկում տարբեր տեսանկյուններից, ներկայացվել են պաշտպանական վարքագծի գործընկերությունները, առանձնակի շեշտադրվել է կիբեռհափշտակիչների կողմից իրականացվող բռնության դեպքերը, քննարկվել են թե ինչպես է մեր մարմինը տեղեկացնում մեզ, որ ինչ-որ բան այն չի, քննարկվել են բռնության իրական դեպքեր և ներկայացվել են բողոքարկման մեխանիզմները:
  Հանդիպման արդյունքում մասնակիցները կարողանում են տարբերակել բռնության 4 տեսակները՝ ֆիզիկական, հոգեբանական, սեռական, տնտեսական, և նրանք իրազեկ են Հայկական Կայկական կարիտասի երեխաների պաշտպանության քաղաքականությանը և բողոքարկման մեխանիզմներին:
  Հանդիպման ընթացքում իրականացվել է նախաթեստերի և վերջնական թեստերի լրացում՝ մասնակիցների գիտելիքների ու իրազեկվածության չափման նկատակով:

- Իրազեկող և կանխարգելիչ հանդիպումները, դասընթացներ ծրագրի շահառու ծնողների համար: Հանդիպմանը ներկա են գտնվել **26** ծնող/մայրեր: Հանդիպման սկզբում տեղի է ունեցել Հարրի Հարլոուի գիտափորձի դիտում և քննարկում՝ կարևորելով երեխաների կյանքում ապահովության զգացումը: Այնուհետ տեղի է ունեցել վարժանք, որի ընթացքում